

տունն Յունաց (Կ. Պոլիս) առաքելաչնորհ քարոզութեամբ. եւ անտի եկեալ յարեւելս ի դաւառ իւր արար սկիզբն քարոզութեան եւ նորածեւ վարդապետութեան»³ :

7. ՄՈՎՍԷՍԻ ՎԵՐԱԳԱՐՁՆ Ի ՍԻՆՆԻՔ

Մովսէս վերադարձաւ Սիսական աշխարհը 1613ին: Հոն Տաթեւի շրջակայքը՝ Եղինգեան գիւղի մէջ գտաւ իր Երուսաղէմէն ծանօթ ճգնաւորները՝ Մարգիս եւ Կիրակոս, շրջապատուած ուրիշ միակրօն միախորհուրդ միաբաններէ, որոնց թիւը աւելի աճեցաւ, երբ տարածուեցաւ վարդապետին գալստեան համբաւը: Մինաս երէց 1613ին անոնց թիւը կը նշանակէ «յիսուն կամ այլ աւելի» (տե՛ս վարը):

Մովսէս վարդապետի վերադարձը ի Տաթեւ «անպատում ուրախութեան» առիթ եղաւ ամէնուն թէ «եկեղեցականներու եւ թէ աշխարհականներու», ինչպէս կը գրէ Գաւրիժեցի (էջ 287), վասն զի «ընդ այն ժամանակս բարձեալ էր վարդապետ անուն յարեւելեան աշխարհէ»¹ :

Տաթեւի միաբանները՝ եպիսկոպոսներն ու արեղաները ի սկզբան սիրով ընդունեցան զինքը. բայց յետոյ լսելով անոր խիստ վարդապետութիւնն եւ տեսնելով անոր խրատամբեր կեանքը, «յետս չողան ի նմանէ,

³ Ձեռ. Էջմ. 2309:

¹ Ձեռ. Էջմ. 2309: